

АРМАН ТАДЕВОСЯН

КОММЕРЧЕСКИЕ БАНКИ РА И ИХ ПУТИ МЕЖДУНАРОДНОЙ ИНТЕГРАЦИИ

Ключевые слова: банк, общий капитал, рентабельность, кредит.

Основной акцент был сделан на оценку современного состояния банковской системы РА. Был проанализирован рынок клиентов торговых банков, в обобщенной форме была дана оценка финансового положения последнего квартала 2017 года, была исследована банковская инвестиционная деятельность. Были исследованы пути международной интеграции и размер участия иностранного капитала в коммерческих банках РА. Были сделаны соответствующие выводы и даны предложения.

ARMAN TADEVOSYAN

COMMERCIAL BANKS AND WAYS OF THEIR INTERNATIONAL INTEGRATION

Key words: bank, total capital, rate of returne, credit.

The main emphasis has been placed on the current state of the Armenian banking system. Commercial banks customers' market has been studied. The assessment of the financial condition of the fourth quarter in 2017 has been summed up, the investment activity of the banking system has been examined. The ways of international integration of commercial banks and measure participation of foreign capital in the banking system has been examined. Appropriate conclusions have been done and suggestions has been given.

ԱՐՓԻՆԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Բանկային գործ,
բակալավորիաբ, 2-րդ կուրս

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հիմնաբառեր. ավանդներ, առևտրային բանկեր, բանկային համակարգ, տոկոսադրույք, խնայողություններ

Առևտրային բանկերը ՀՀ ֆինանսական համակարգի կարևորագույն օղակներն են: Երկրի ֆինանսական համակարգի կայունության համար անհրաժեշտ է բանկային համակարգի առջև ի հայտ եկող խնդիրների հրապարակ լուծում: ՀՀ առևտրային բանկերի գերակա խնդիրներից է միջոցների ներգրավումը և վերջիններիս արդյունավետ բաշխումը: Այս հոդվածում ներկայացված են առևտրային բանկերի կողմից ներգրավվող ավանդների կազմն ու կառուցվածքը, բնութագրող ցուցանիշները, վերջիններիս վրա ազդող գործոնները: Հետազոտության արդյունքում կատարվել են համապատասխան եզրակացություններ և ուղիներ են առաջարկվել բանկերում տնային տնտեսությունների դրամական միջոցների ներգրավման համար:

Ինչպես ՀՀ ԿԲ-ի, այնպես էլ յուրաքանչյուր առևտրային բանկի կողմից մշակված ռազմավարությունն ու մարտավարությունը ուղղված են ի հայտ

եկող ռիսկերի կանխատեսմանը և զսպմանը: ՀՀ-ն տնտեսական ոլորտում ծագած խնդիրները լուծելիս հաշվի է առնում իր առանձնահատկությունները, մասնավորապես՝ մակրոտնտեսական իրավիճակը, ֆինանսական համակարգի կառուցվածքն ու զարգացման աստիճանը: ՀՀ տնտեսության զարգացման համար կարևոր է՝ բարենպաստ պայմաններ ստեղծել հավանական ներդրողների համար:

Բանկային գործառնությունների շրջանակում դժվար է զանազանել և մատնանշել բանկի հիմնական կամ եկամտաբեր գործառնությունները, սակայն անժխտելի է վարկային և ավանդային գործառնությունների դերը: Ազատ դրամական միջոցների ներգրավումը բանկի համար կարևորվում է նրանով, որ թեև դրանք դիտվում է որպես պարտավորությունների ստանձնում, այնուհանդերձ, այդ միջոցներն ընդգրկվում են բանկի ընթացիկ ակտիվների կազմում և օգտագործվում են բանկի կողմից վարկերի տրամադրման ձևով: ՀՀ առևտրային բանկերի գերակա խնդիրներից է միջոցների ներգրավումը և արդյունավետ բաշխումը:

Աղյուսակ 1


	2015	2016	2017
Ընդ. ավանդներ	1 951 107	2 413 361	2 624 592
Ռեզիդենտներից	1 501 844	1 761 826	2 106 015
Ցախհանջ	450 435	607 625	647 075
Ձեռնարկություններից	220 784	231 062	310 882
Դրամով	87 652	116 938	149 758
Արտարժույթով	133 132	114 124	161 124
Տնային տնտեսություններից	175 421	203 278	260 188
Դրամով	84 448	103 301	134 993
Արտարժույթով	90 973	99 977	125 195
Այլ ավանդներ	54230	173285	76005
Դրամով	37938	34826	43375
Արտարժույթով	16292	138459	32630
Ժամկետային	1 115 319	1 277 071	1 515 557
Ձեռնարկություններից	169 019	178 429	261 784
Դրամով	35 887	64 305	100 660
Արտարժույթով	133 132	114 124	161 124
Տնային տնտեսություններից	830 538	952 580	1 091 023
Դրամով	203 991	268 388	371 201
Արտարժույթով	626 547	684 192	719 822
Այլ ավանդներ	115762	146062	162750
Դրամով	84376	110853	130772
Արտարժույթով	31386	35209	31978
Ոչ ռեզիդենտներից	449 263	651 535	518 577
Դրամով	391 485	494 910	412 998
Արտարժույթով	57 778	156 626	105 579
Դրամով ընդամենը	925 777	1 193 521	1 343 757
Արտարժույթով ընդամենը	1 089 240	1 342 711	1 337 452

Բանկերի ֆինանսական կայունության համար կարևոր է ճիշտ ընտրված վարկային քաղաքականությունը: Ակտիվային գործառնությունների համար պահանջվող դրամական ռեսուրսների 90%-ից ավելին բանկերն ապահովում են ներգրավված միջոցների հաշվին, որոնց հիմնական մասը կազմում են ավանդները (դեպոզիտները), որոնք բանկ են ներդրվել հաճախորդների

կողմից, պահվում են համապատասխան հաշիվներում և տնօրինվում՝ համաձայն այդ հաշիվների համար սահմանված կարգի և բանկային օրենսդրության: Ուստի բանկերի կառավարման կարևորագույն օղակներից են բանկային ավազները՝ ըստ տարատեսակների և դրանց համամասնությունների փոփոխությունը: Այդպիսի փոփոխությունները կարող են հանգեցնել բանկի իրացվելիության կորստին, հետևաբար նաև՝ անվճարունակությանը, ուստի ՀՀ առևտրային բանկերի գերակա խնդիր է պարտավորությունների կառավարման ճիշտ ընտրությունը:

Ներգրավված միջոցների կարևորությունն ընդգծելու, փոփոխությունները պայմանավորող գործոնների ազդեցությունը և կապը պարզաբանելու համար ներկայացնենք ՀՀ-ում ավանդների կազմն ու կառուցվածքը 2015-2017 թթ. ընթացքում:


Ուսումնասիրելով այս 3 տարիներին ավանդների կազմն ու կառուցվածքը՝ կարող ենք ներկայացնել հետևյալ միջինացված ցուցանիշները.



Գծապատկեր 1

Ավանդների մեծ մասը ստացվել է ռեզիդենտներից (76.3%), որից 71.84%-ը ժամկետային ավանդներ են: Ավանդների 50.3%-ը ներգրավված է արտարժույթով: Ժամկետային ավանդների գերակշիռ մասը՝ 73.54%-ը, բաժին է ընկնում տնային տնտեսություններին, իսկ ցպահանջ ավանդների 44.73%-ը՝ ձեռնարկություններին:


Համաձայն գծապատկերի 1-ի՝ ավանդների ընդհանուր արժեքի ամենամեծ բաժինը պատկանում է տնային տնտեսություններին (65)%, հաջորդում է մասնավոր հատվածը, որին պատկանում է ընդհանուր ավանդների 25.5%-ը:



Գծապատկեր 2

Ինչպես տեսնում ենք, բանկերի ներգրավված միջոցների զգալի մասը ապահովվում է տնային տնտեսությունների կողմից: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերջիններիս խնայողությունները կազմել են 1351210 մլն դրամ:

Կարող ենք նկատել, որ 2015-2017 թթ. ընթացքում դրամով և արտարժույթով ցպահանջ ավանդների տեսակարար կշիռը գրեթե չի փոխվել՝ մնալով 9-10%-ի սահմաններում: ՀՀ քաղաքացիների զգալի մասը նախընտրում է իր ժամկետային ավանդները պահել արտարժույթով. 2015 թ. արտարժույթով ժամկետային ավանդների տեսակարար կշիռը կազմել է 62%, 2016 թ.՝ 59%, իսկ 2017 թ.՝ 53%: Այսինքն, արտարժույթով ավանդների ներգրավման տեմպը աստիճանաբար նվազում է:




Եթե այս փոփոխությունը դիտարկենք ըստ արժույթների, ապա պատկերն ավելի հետաքրքիր կլինի. 2016 թ., 2015-ի համեմատ, դրամով ժամկետային ավանդները աճել են 31%-ով, 2017 թ.՝ 38.3%-ով, մինչդեռ արտարժույթով ժամկետային ավանդները 2016 թ., 2015-ի համեմատ, աճել են ընդամենը 9.2%-ով, իսկ 2017 թ.՝ 5.2%-ով:

Թեև դոլարացման մակարդակը մնում է բարձր (ժամկետային ավանդների 53%-ը արտարժույթով է), այդուհանդերձ, վերոնշյալ շարժընթացից կարող ենք եզրակացնել, որ ՀՀ քաղաքացիների վստահությունը դրամի նկատմամբ աճել է: Այս աճը կարող ենք կապել 2015 թ. ՀՀ-ում տեղի ունեցած մի շարք օրենսդրական փոփոխությունների հետ, որոնցից ամենաաեականը «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունն էր, համաձայն որի՝ երաշխավորված ավանդի չափերը ավելացան:¹ Այն նպաստեց ՀՀ բանկային համակարգի ամրապնդմանը և վերջինիս նկատմամբ ավանդատուների վստահության բարձրացմանը:

Ինչ վերաբերում է 2015-2017 թթ. տոկոսադրույքի փոփոխությանը, ապա այն ունի հետևյալ շարժընթացը՝

¹ Տե՛ս ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2016-2018:



2015 թ.՝ 14.33% դրամով, 7.21% դոլարով,
 2016 թ.՝ 13.45% դրամով, 6.8% դոլարով,
 2017 թ.՝ 11.3% դրամով, 5.32% դոլարով:

Ավանդների տոկոսադրույքների նվազումը պայմանավորված է ԿԲ վարած խթանող դրամավարկային քաղաքականությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ ԿԲ-ն որոշում ընդունեց ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը 5 մլրդ դրամից բարձրացրել է մինչև 30 մլրդ դրամ:

Ընդլայնողական դրամավարկային քաղաքականության արդյունքում ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցրեց, որի արդյունքում նվազեցին նաև ֆինանսական շուկայի մյուս տոկոսադրույքները: Իսկ առևտրային բանկերի ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափի փոփոխումը բերեց նրան, որ բանկերում կուտակվեցին հսկայական միջոցներ:

Չնայած տոկոսադրույքների նվազող մակարդակին՝ ՀՀ քաղաքացիները շարունակում են իրենց խնայողությունները ներդնել ավանդների տեսքով: Սա կարող ենք կապել նրանց ֆինանսական գիտելիքների մակարդակի բարձրացման հետ: Եթե գիտելիքների մակարդակը համեմատենք նախորդ տարիների հետ, ապա փոփոխությունն ակնհայտ է: 2012 թ. ընթացքում Համաշխարհային բանկի կողմից իրականացվել է տնային տնտեսությունների «Ֆինանսական ունակությունների հետազոտություն», համաձայն որի՝ հարցվածների 66%-ը գումար է խնայում ապագայի մեծ ծախսերի համար, սակայն նրանց միայն 6%-ն ավանդ ունի բանկերում¹: Ֆինանսական կրթման ազգային ռազմավարության նպատակն էր բարձրացնել ՀՀ-ում բնակվող անձանց ֆինանսական գրագիտության մակարդակը, որը կնպաստի երկրում ֆինանսական կայունությանը, ֆինանսական միջնորդության խորացմանը և մարդկանց բարեկեցության բարելավմանը:

¹ Տե՛ս ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարություն:

ՀՀ-ում շատ կարևոր է, որ բնակչության միջոցները ոչ թե պահվեն տանը՝ խնայողությունների տեսքով, այլ որպես ավանդներ ներդրվեն բանկերում: Սա խթան կհանդիսանա վարկավորման պայմանների բարելավման համար, ինչն էլ կնպաստի տնտեսության աշխուժացմանը և զարգացմանը: Այս գործընթացում կարևոր է առևտրային բանկերի կողմից մշակվող և կիրառվող ավանդային քաղաքականությունը: Խնայողությունների հետ կապված հիմնախնդիրը լուծելու համար պետք է նախևառաջ մեծանա առևտրային բանկերի նկատմամբ վստահության մակարդակը: Ներկայիս մրցակցության պայմաններում էական նշանակություն ունեն առևտրային բանկերի վարկանիշները, որոնք նրանց հուսալիության կարևորագույն նախապայմաններից են: Առևտրային բանկերը կարող են իրականացնել մարքեթինգային քայլեր, որոնք բնակչության շրջանում հետաքրքրություն կառաջացնեն բանկերի, դրանց կողմից առաջարկվող ավանդային պրոդուկտների նկատմամբ: Ինչպես գիտենք, ավանդից ստացվող տոկոսագումարները համարվում են եկամուտ և հարկվում են եկամտային հարկով: Ավանդների նկատմամբ եկամտային հարկի տոկոսադրույքի որոշակի չափով փոփոխությունը կարող է նպաստել բնակչության դրամական միջոցների ներհոսքին դեպի բանկ: Առևտրային բանկերի կողմից կարող են մշակվել նոր, այլընտրանքային պրոդուկտներ, որոնք բնակչության կողմից կդիտվեն որպես առավելություն՝ միջոցները տանը պահելու նկատմամբ:

Այսպիսով, եթե փորձենք ամփոփել մեր կատարած ուսումնասիրությունը, ապա կարող ենք փաստել, որ 2015-2017 թթ. ընթացքում, անկախ տոկոսադրույքի նվազման միտումներից, ներգրավված ավանդների ծավալի աճ է տեղի ունեցել: ՀՀ քաղաքացիների շրջանում մեծացել է դրամի նկատմամբ վստահությունը, ինչը փաստում է դրամով ժամկետային ավանդների տեսակարար կշռի աճը ընդհանուր ավանդների մեջ: Յուրաքանչյուր բանկի համար կարևոր է խելամիտ մշակված ավանդային քաղաքականությունը, քանի որ նրանց միջոցների զգալի մասը ապահովվում է ավանդներով:

Ընդհանրացնելով կարող ենք առանձնացնել ավանդների կազմի և կառուցվածքի բարելավմանը, ներգրավվող միջոցների աճին նպաստող հետևյալ դրույթները՝

- ՀՀ առևտրային բանկերի կողմից առաջարկվող ավանդային ծառայությունների տեսականու ընդլայնում և որակի բարձրացում:
- Այնպիսի միջոցառումների մշակում, որոնք կնպաստեն բնակչության շրջանում իրազեկվածության բարձրացմանը:
- Ավանդների ներգրավման ուղղությամբ նոր, այլընտրանքային, յուրօրինակ պրոդուկտների մշակում, որը հնարավորություն կտա առավելության հասնել մրցակից բանկերի նկատմամբ և խնայողությունները պահել բանկերում:
- Մատուցվող ծառայությունների թարմացում՝ ժամանակի պահանջներին համապատասխան:
- Յուրաքանչյուր բանկ պետք է ժամանակի ընթացքում ձեռք է բերի որոշակի վարկանիշ, որը հաճախորդների տեսանկյունից կդիտարկվի որպես վստահության երաշխիք:

ԱՐՓԻՆԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

**ПОКАЗАТЕЛИ, ХАРАКТЕРИЗУЮЩИЕ СОСТАВ И СТРУКТУРУ ДЕПОЗИТОВ
КОММЕРЧЕСКИХ БАНКОВ АРМЕНИИ****Ключевые слова:** депозиты, коммерческие банки, банковская система, процентные ставки, сбережения.

Коммерческие банки являются одной из важнейших отраслей финансовой системы Армении. Для стабильности финансовой системы страны необходимо срочное решение проблем, стоящих перед банковской системой. Одной из приоритетных задач коммерческих банков Армении является привлечение средств и их эффективное распределение. В данной статье описывается состав и структура депозитов, привлеченных коммерческими банками, их характерные показатели и их влияние на последние. В результате исследования были сделаны соответствующие выводы и предложены пути привлечения денежных средств домашних хозяйств в банках.

ARPINE TADEVOSYAN

**INDICATORS CHARACTERIZING THE COMPOSITION AND STRUCTURE OF
DEPOSITS OF ARMENIAN COMMERCIAL BAN****Key words:** deposits, commercial banks, banking system, interest rates, savings.

Commercial banks are one of the most important sectors in Armenian financial system. Imidiate solution of bank system problems is necessary to keep the stability of country's financial system. One of the priority problems of Armenian commercial banks is to involve deposits and to distribute them effectively. The article describes the structure of involving deposits, characteristic indicators, and factors which affect them. In a result of the research conclusions were made and ways were offered to involve households' money in the banks.

ՔՐԻՍՏԻՆԵ ԹԱԹՈՍՅԱՆՁրոսաշրջության կառավարում,
բակալավրիադ, 3-րդ կուրս**ՀՀ ՁՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՆԱԿՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ****Հիմնաբառեր.** զրոսաշրջության մրցունակություն, ենթակառուցվածք, հենասյուն, գնային մրցունակություն, տնտեսության ճյուղ

Համաձայն ՀՀ զրոսաշրջության մրցունակության զեկույցի՝ Հայաստանը մի քանի տարի անընդմեջ բարելավում է իր դիրքերը և շարունակում ակտիվ քաղաքականությունը՝ ուղղված ոլորտում առկա խնդիրների լուծմանը: Անհրաժեշտ է զարգացնել ենթակառուցվածքները, բարելավել ճանապարհները, պատրաստակալության հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքներն ապահովել անհրաժեշտ զրոսաշրջային ենթակառուցվածքներով և առավել արդյունավետ օգտագործել: Հարկ է նշել, որ Հայաստանի հասանելիության բարդությունը, հայկական ավիացիայի շուկայի գնային քաղաքականությունը, մարքեթինգի բացերը և հատկապես ճանապարհների ոչ բարվոք վիճակը խոչընդոտում են զրոսաշրջության զարգացմանը: